Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման

դասընթաց **2023**

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինչպես սովորողների մոտ զարգացնել մշակութային կարողունակությունը:

Հեազոտող ուսուցիչ՝ Իրինա Բաղդասարյան Սիմֆերի

Բայանդուրի միջն. դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....էջ 2

Թանգարանների կարևորությունը մեր կյանքում.....էջ 4

Էքսկուրսիաների կարևորությունը.....էջ 10

Սովորողների մասնակցությունը հնագիտական պեղումներին.....էջ 14

Եզրակացություն.....էջ 16

Օգտագործված գրականության ցանկ..... էջ 17

Ազգային մշակույթին, նրա ստեղծած արժեքներին ժողովրդին հաղորդակից դարձնելու համար անհրաժեշտ է պահպանել ու զարգացնել ազգային դպրոցը: Մշակույթը հսկայական դեր է խաղացել հայ ժողովրդի ձևավորման գործում և հայ ազգի պատմության մեջ: Այսօր՝ ազգային մշակույթը, կարծես այս տեխնիկական դարում երկրորդ պլան է մղվել: Դպրոցներում քիչ տեղ է հատկացվում գեղագիտական դաստիարակությանը, արվեստին և գրականությանը: Օտար մշակույթների ազդեցությունը այնքան է շատացել, որ անհրաժեշտ է սովորողների մոտ ձևավորել հոգևոր և գեղագիտական զարգացում: Կրթական բարեփոխումների փուլում պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել սովորողների հյութական և հոգևոր պայմանների զարգացմանը:

Երկար տարիներ պատմություն դասավանդելու ընթացքում իմ մշտադիտարկումները բերեցին այն համոզման, որ պետք է մեծ ուշադրություն դարձնել այս խնդրին, թէ ինչպես սովորողների մոտ զարգացնել մշակութային կարողունակություն:

Հետազոտությանս համար թիրախային խմբեր հանդիսացան 5-ից 12-րդ դասարանների սովորողները:

Մշակութային բազմազանությունը շատ փոքր ազգերի փորձության է ենթարկում: Այսօր մենք կանգնած ենք այդ փորձության առաջ և ժամանակի ընթացքում կարող է այն աղետալի լինել:

Գլուխ **1.** Թանգարանների կարևորությունը մեր կյանքում

<< Վարպետ է այն ուսուցիչը, ով կարողանում է բացել մի շարք տարբեր պատուհաններ միևնույն նյութի կամ հասկացության շուրջ>>[1]

Մշակույթը հասարակության և մարդու պատմական զարգացման որոշակի մակարդակ է, որն արտահայտվում է մարդկանց գործունեության և կյանքի կազմակերպման ձևերով ու տիպերով: Մշակույթը կենտրոնական

[1] Մանկավարժ-հոգեբան՝ Հ. Գարդներ

հայեցակարգ է մարդաբանության մեջ և ներառում է այն բոլոր երևույթները, որ սոցիալական ուսուցման միջոցով փոխանցվում են մարդկային հասարակություններում:

Ընդունված է մեր երկիրը համարել թանգարան բաց երկնքի տակ: Հայաստանի ամբողջ տարածքով սփռված են մշակութային հուշարձաններ: Հայոց պատմության առանցքային իրադարձությունները և երեվույթները առավել խորությամբ պատկերացնելու, հասկանալու համար անհարժեշտ է սովորողների մոտ զարգացնել մշակութային կարողունակություններ:

Հանրակրթական դպրոցներում միջնակարգ կրթության կարողունակություններն են՝

1. Լեզվական գրագիտություն և կարողունակություն
2. Սովորել սովորելու կարողունակություն
3. Ինքնաճանաչողական սոցիալական կարողունակություն
4. Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
5. Թվային և մեդիա կարողունակություն
6. Մշակութային կարողունակություն
7. Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն
8. Տնտեսական կարողունակություն:

Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներից է մշակութային կարողունակությունը:

Սովորողների համար առանձնակի նշանակություն ունեն տեսողական ընկալումը և գնահատումը մշակութային արժեքների: Սովորողներին պատմությանը կապելու մշակութային դաստիարակության մոտեցումները տարբեր են:

Դրանք են.

1. Թանգարանային այցելությունները
2. Էքսկուրսիաները
3. Հնագիտական պեղումները

ՀՀ տարբեր կրթական հաստատություններում իրականացվող ուսումնական գործընթացների բաղկացուցիչ բաղադրիչներց մեկը կարելի է համարել թանգարանային այցելությունները: Թանգարանային կրթությունը արժեքների , հասկացությունների գիտելիքների և պարկտիկաների շարակարգ է, որը նպատակ ունի ապահովել այցելուի զարգացումը, այսինքն՝ << մշակույթի յուրացման գործընթացը, որը հենվում է

մանկավարժական մեթոդների այցելուի կատարելագործման, պահանջմունքների բավարարման, նոր գիտելիքների ձեռքերման հիման վրա>>: [2]

Թանգարանները հանրային ծառայությանը ու կրթությանը կոչված հաստատություններ են,որոնք առաջարկում են բացահայտում, ուսումնասիրություն, քննադատական մտածողություն, զննում և երկխոսություն:

Ամերիկյան Թանգարանների Միություն /AAM1992

Մասնագիտական գրականությունից հայտնի է, որ ժամանակակից հանրային թանգարանները ի սկզբանե ստեղծվել են որպես կրթական կառույցներ:

Ուսուցչի շնորհիվ թանգարանը կարող է դպրոցական լսարանի վրա առավել արդյունավետ ազդեցություն գործելու հնարավորություն ստանալ: Քաջածանոթ լինելով աշակերտների գիտելիքների մակարդակին, կարողություններին և նախասիրություններին՝ վերապատրաստված ուսուցիչը կկարողանա ավելի բազմակողմանի ու արդյունավետ ներկայացնել թանգարանային հավաքածուների միջոցով ուսուցանվող թեմաները, քան թանգարանի աշխատակիցը: Ուսուցչի վերապատրաստումը առավել շահավետ է նաև ֆինանսական առումով, քանի որ թանգարանից լրացուցիչ ծախսեր չի պահանջում:

Թանգարանի և դպրոցականների միջև միջնորդ հանդիսացող ուսուցիչի շնորհիվ թանգարանը հնարավորություն է ստանում համակողմանի և արդյունավետ իրականացնել աշակերտների հաղորդակցումը թանգարանային արժեքների հետ: Թանգարաններ այցելելու նպատակն է

- Վաղ հասակից երեխաների մեջ սերմանել թանգարան հաճախելու մշակույթ
- Նպաստել գեղագիտական դաստիարակությանը
- Հաշվի առնելով տեղեկատվությունը ընկալելու սովորողների տարիքային հնարավորությունները՝ տալ համառոտ տեղեկություններ
- Թանգարան այցելությունը դարձնել բովանդակալից և հաճելի:

Թանգարաններն իրականացնում են ուսումնառության չորս մոտեցում

1. Ուսուցանող

[2] ԻԿՕՄ-ի (ՅՈՒՆԵՍԿՕ-ին առընթեր թանգարանների միջազգային խորհուրդ 22.էջ 31)

2. Ակտիվ
3. Կառուցողական
4. Սոցիալական

Առաջինի դեպքում ավանդական թանգարանային բացատրական աշխատանքի մասին է, երբ այցելուն պասիվ գիտելիքի ընկալողի դերում է, իսկ թանգարանը՝ փորձագետ-ուսուցանողի:

Երկրորդ մոտեցումը այցելուի դերային ներգրավումն է:

Երրորդ մոտեցումը թանգարանը ակտիվ քննարկումներ է սկսում, որտեղ այցելուն առաջարկողի դերում է:

Այս բոլոր երեք մոտեցումները բերում են սոցիալական կառուցողականի:

Այսպիսով, արդի թանգարանային կրթությունը բերում է այցելուի զարգացմանը կամ վերափոխմանը:

ՀՀ ներկայիս թանգարանների մեծ մասը գործում են կրթադաստիարակչական գործառույթների իրականացման գերակայությամբ և խնդիրներով:

Ազգային դպրոցը պետք է լուրջ աշխատանքներ տանի այս ուղղությամբ: Թանգարանային այցելությունները չպետք է սահմանափակվեն միայն մարզի տարածքում: Թանգարանները նպաստում են սովորողների պատմամշակութային զարգացմանը:

Միջին տարիքի սովորողների հետ այցելություններ եմ կազմակերպել Գյումրիի Ջիթողցոնց տուն-թանգարան, Մերկուրովի տուն-թանգարան Ավետիք Իսահակյանի և Հովհաննես Շիրազի տուն -թանգարաններ:

Ջիթողցոնց տուն-թանգարանը, սովորողների մոտ մեծ հետաքրքրություն առաջացրեց: Նրանք ծանոթացան 19-րդ դարի գյումրեցի արհեստավորների և ունևոր խավի բնակարանների ներքնատեսքին:

Շիրազի և Իսահակյանի տուն-թանգարաններում սովորողները ներգրավում են դերային խաղի մեջ:

Վերջին տարիների <<թանգարանային գիշեր>> ակցիայի շրջանակներում թանգարանները շահագրգիռ մասնակցություն են ցուցաբերում՝ տարբեր միջոցառումների կազմակերպմամբ: Սակայն թանգարանները անհավասարակշիռ են բաշխված երկրով մեկ, որն էլ խնդիր է առաջացնում կրթական ծրագրեր իրականացնելուն:

Ութերրորդ դասարանում Հայոց Մեծ Եղեռնը ուսումնասիրելուց այցելեցինք ցեղասպանության թանգարան , մասնակցեցինք սեմինարի, որտեղ ներկայացվեց Նեմեսիս գործողությունը: Այնուհետև ծանոթացանք թանգարանի նմուշներին:

Ցեղասպանության թանգարանի այցից հետո, սովորողների մոտ մեծ հետաքրքրություն առաջացավ ուսումնասիրելու իրենց արմատները, արդյոք ցեղասպանությունից չեն տուժել նաև իրենց մեծ տատերն ու պապերը: Մի քանիսը նույնիսկ գրի առան իրենց տատերից և պապերից լսած պատմությունները ցեղասպանության մասին, որոնք կատարվել էին իրենց մեծ տատերի և պապերի հետ:Այդ գրառումները պատրաստվում ենք ուղարկել ցեղասպանության թանգարան: Մայիսին՝ Ջիրոդցոնց տուն- թանգարանում, կազմակերպվել էր ձեռագիր մատյանների ուսումնասիրման և ներկայացման դասընթացներ: Միջին և ավագ դպրոցի սովորողներով այցելեցինք դասընթացին, այն շատ հետաքրքիր և բովանդակալից էր, սակայն տեղափոխման հարցը բավականին դժվար էր: Առաջարկում եմ մարզպետարանները ծրագրեր մշակեն համայնքի երեխաներին աջակցելու և ֆինանսավորելու գործում:

Թանգարան-դպրոց գործընթացը վերջին տարիներին զարգացման միտում ունի և նոր հետազոտական ոլորտ է հադիսանում:

Գլուխ **2.** Էքսկուրսիաների կարևորությունը

Էքսկուրսիաները ազգային դպրոցի աշխատանքի բաղկացուցիչ մաս են կազմում: Էքսկուրսիաները դասեր են բնության, թանգարանի պատմամշակութային կառույցների հուշարձանների մասին:<< Էքսկուրսիա>> բառը ծագել է լատիներենից և նշանակում է զբոսանք կամ ճանապարհորդություն: Էքսկուրսիան որոշակի ձևով մարդկանց խմբին փոխանցվող գիտելիքների հանրագումար է և դրաց փոխանցման գործողությունների որոշակի համակարգ: Էքսկուրսիաները թեմատիկ պլանավորման մեջ պետք է ներառել: Էքսկուրսիան արտադպրոցական դաստիարակության հյուղերից մեկն է, որի նպատակն է սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծել : Այն նպատակաուղղված է նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը: Էքսկուրսիաները լինում են մուտքային, ընթացիկ և ամփոփիչ:

Մուտքային- Նախապատրաստվում են ուսումնասիրել այս կամ այն թեման, նախապես հավաքելով նյութեր, որոնք էլ օգտագործում են տվյալ թեմայի ուսումնասիրման ժամանակ:

Ընթացիկ - անցկացվում է նոր թեմայի ուսումնասիրմանը զուգահեռ:

Ամփոփիչ- անցկացվում է թեմայի անցկացման ավարտին:

Պետք է հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները և աշակերտների պատրաստվածության մակարդակը: Նախքան էքսկուրսիա անցկացնելը ուսուցիչը պետք է նախապես ..

1. Ընտրի էքսկուրսիայի վայրը
2. Մշակի պլան
3. Ապահովի կարգապահություն
4. Համոզվի,որ էքսկուրսիան նպատակային է

Ուսուցիչը էքսկուրսիա վարելու արվեստ պետք է իմանա և պետք է զարգացնի սովորողների ակտիվությունը, առաջարկի աշխատանքի որոշակի տեխնիկա և աշխատանքներ:

Ուսուցչի բացատրությունը պետք է լինի կարճ, հստակ և հասանելի: Եթե էքսկուրսիան պահանջում է տեսական բացատրություն, ապա դրանք պետք է տրվեն կամ էքսկուրսիայից առաջ, կամ դրանից հետո: Պետք է ճիշտ կազմակերպել նաև երեխաների հանգիստը անցկացնել մրցույթներ, խաղեր: Էքսկուրսիան ունի նաև ամփոփում, որտեղ ուսուցիչը պետք է կարճ հարցերով պարզաբանի երեխաների գիտելիքները և տպավորությունը:

Ճարտարապետությունը քարացած պատմություն է ժողովրդի ամենահասատուն և ամենավստահելի ինքնակենսագրությունը: Պատմության դասերը դատարկ կլինեն առանց ճարտարապետական հուշարձանների այցելության:

Էքսկուրսիայի հիմքում ճանաչողական մեթոդն է, այն հիշողություն է ամրապնդում գեղեցիկի հանդեպ, նոր բացահայտումներ է անում և հոգատարություն է դրսևորում մեր հայրենիքի պատմամշակութային արժեքների նկատմամբ: Իմ փորձից ելնելով էքսկուրսիաները զարգացնում, ձևավորում, ամրապնդում են մարդու ճանաչողական, ստեղծագործական կարողունակությունը: Բազմաբնույթ միջոցառումներով փորձել եմ սովորողների գիտակցության մեջ ձևավորել հարգանք մեր ազգի պատմության, հերոսների և ճարտարապետական հուշարձանների հանդեպ: Իմ էքսկուրսիաներում միշտ ընդգրկել եմ սովորողների այցը Օշական՝ Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի: Նպաստակը էքսկուրսիայի մասնակիցներին հոգեհարազատ տարբերակով ներկայացնել հայոց այբուբենի ստեղծման պատմական ժամանակաշրջանը: Հարցերի միջոցով բացահայտվում և ամրապնդվում է դպրոցում ստացած գիտելիքները: Այն կապում է և Հայոց պատմություն և Հայոց եկեղեցու պատմություն առարկաները, քանի որ կարևորվում է << Աստվածաշունչը>> և Մաշտեցը որպես քրիստոնյա հոգևորական :

Այցեր եմ կազմակրպում նաև Վաղարշապատ ՝ Սբ էջմիածնի տաճար, Գառնի, Գեղարդ, Նորավանք, Գոշավանք, Սանահին , Հաղպատ, Հաղարծին, Խոր Վիրապ, Շիրակի մարզի պատմամշակութային կառույցներ և այլն:

Իմ էքսկուրսիաների շարքում ներառում եմ նաև Սարդարապատի, Ապարանի հուշարձանները: Եկեղեցիներ այցելելիս սովորողները կապվում են նաև Հայոց եկեղեցու պատմություն առարկային , իմանում են եկեղեցու ներքին և արտաքին կառուցվածքը: Ինչու ոչ, սովորողների մոտ զարգանում է նաև քարտեզագիտություն, իսկ ճանապարհորդության ընթացքում հոգատարություն ընկերների հանդեպ: Այս ամենը նպաստում է <<սերը դեպի հայրենիք>> գաղափարախոսությանը:

Թեմատիկ պլանավորման մեջ ներառելու եմ վեցերորդ դասարանում Խաչվերաց տոնը եռամիավոր նպատակ հետապնդելով:

Ուսուցողական՝ Սովորեցնել Խաչվերացի տոնին իրականացվող եկեղեցական ծիսակարգի ընթացքը:

Զարգացնող՝ զարգացնել սովորողի մոտ սեփական արժեքների կարևորությունը

Դաստիարակչական՝ ծանոթացնել Խաչվերացի ծիսակատարություններին և արժևորել հայ հոգևոր ժառանգությունները:

Քայլեր	Ինչ պետք է անել	Երբ պետք է դա անել	Որտեղ դա պետք է անել	Ինչպես պետք է դա անել
1	Ստանալ թույլտվություն տնօրինությունից	5.09.2023	դպրոց	Անհատական և թիմային
2	Կարգավորել տրանսպորտային հարցերը	5.092023	դպրոց	Տնորինություն և ուսուցչական անձնակազմ
3	Պայմանավորվել ծնողների և մայրենիի ուսուցչի հետ	5.09.2023	դպրոց	Խմբի ղեկավար
4	Զբաղվել ընթացիկ կազմակերպչական հարցերով	6.09.2023	դպրոց	Մայրենիի ուսուցիչ և ծնող
5	Գնալ Գյումրի, մասնակցել Պատարագին: Վարադառնալ	10.09.2023	Ք. Գյումրի Սբ Աստվածածին եկեղեցի	Կազմակերպել ուսուցողական-հանգչողական էքսկուրսիա

Սովորողների մասնակցությունը հնագիտական պեղումներին

էքսկուրսիաների մաս է կազմում նաև հնագիտական պեղումները:

Հնագիտությունը պատմական գիտության մի մաս է, որն ուսումնասիրում է բրածո նյութեր, որոնք կազմված են մարդու գործունեության հետ: Հայաստանում հնագիտական պեղումները սկսվել են դեռևս 19-րդ դարի 70-80-ական թվականներին և ապացուցվել, որ հայկական լեռնաշխարհը մարդու բնակության հիմնական կենտրոններից են:

Երբեմն կազմակերպում եմ այց հնագիտական մի բնակավայր որտեղ պեղումներ են ընթանում: Մեր մարզում նման վայրերից այցելել ենք Բենիամինի դամբարանային դաշտեր, որտեղ բացվել է Կամսարականների տիրույթները:

Հնագիտությունը գիտության այն եզակի ճյուղերից է, որը խաչվում է միանգամից մի քանի այլ կարևոր ոլորտների հետ: Ինչպես օրինակ՝ մշակույթի, կրթության զբոսաշրջության և այդ միջոցով նաև տնտեսության: Սա նշանակում է, որ այս ոլորտում էական փոփոխությունների դեպքում մենք դրական ազդեցություն կունենանք նշված ոլորտների վրա:

Մեր հարևան երկրում՝ Վրաստանում, սովորողները հնարավորություն ունեն մասնակցել պեղումների, որտեղ մասնագետը ցույց է տալիս գրագետ պեղելու գործընթացը: Սովորողը մեծ ոգևորություն է

ապրում և ձգտում ներգրավվել հնագիտության մեջ: Մենք այս առումով կարող ենք ունենալ լրջագույն ներուժ՝ լինելու տարածաշրջանի ամենահետաքրքիր երկիրը: Այս ծրագիրը կազդի կրթության վրա և կսկսվի մշակութային լուրջ իրարանցում:

Սովորողները մեծ հետաքրքրությամբ են մասնակցում պեղումներին և դա նպաստում է նրան, որ դպրոցն ավարտելուց հետո դիմում են ԵՊՀ-ի <<Հնագիտություն>> բաժին, որը վերջին տարիներին ֆիզ դիմորդներ ունի:

Ցանկությունս է, որ համապատասխան կառույցները զբաղվեն այս գործով, որը կոգևորի թէ սովորողին, և թէ զբոսաշրջության ոլորտը ավելի կընդլայնի:

<<Հնագիտությունը 21-րդ դարում Հայաստանի պատմության բացահայտումների հիմնաքարն է>>: [3]

Ժամանակն է, որ Հայաստանում հնագիտությունը նշանակալի առաջընթաց ունենա:

[3] ԻԿՕՄ-ի (ՅՈՒՆԵՍԿՕ-ին առընթեր թանգարանների միջազգային խորհուրդ 22.էջ 31)

Եզրակացություն

Ինչպիսի հասրակությունում են ապրելու մեր երեխաները, այս հարցի պատասխանի կարևոր մասն ընկած է այն կրթության մեջ, որ նրանց տալիս ենք այսօր:

Այսպիսով, սովորողների մոտ մշակութային կարողունակությունը զարգացնելու համար պետք է նրանց ներգրավել էքսկուրսիաների (թանգարանային այցելություններ, զբոսաշրջություն, հնագիտական պեղումներ) մեջ:

Շատ նպատակահարմար է աշխարհագրության,պատմության,ՀԵՊ դասերը անցկացնել մշակութային,պատմաճարտարապետական հուշարձանների,վանական համալիրների տարածքներում,ազգային ազատագրական վայրերում: Այն ճանաչողական հետաքրքրություն է ձևավորում սովորողի մոտ: Էքսկուրսիաները նպաստում են քրիստոնեական արժեհամակարգի ամրապնդմանը:Դաստիարակում են սեր դեպի բնությունը,հուշարձանները:

Ուստի էքսկուրսիաների կազմակերպումը անհրաժեշտ պայման է՝

- սովորողների մոտ բարձրացնել մոտիվացիան
- զարգացնելո լեզվական , սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական, մշակութային կարողունակությունները
- ընկալելու երևույթների գեղագիտական նշանակությունը
- արժևորելու սեփական մշակույթը:

Օգտագործված գրականության ցանկ

Բարսեղսեղյան Լ Ա . Թանգարանն այցելումով է թանգարան 1984թ. էջ 7-13

Գիբս Ք,. Սանի Մ. Թոմսոն Ջ., Շարունակական կրթություն թանգարաններում, Եվրոպական ձեռնարկ, Երևան 2007թ.

Գրիգորյան Ա. Թանգարանի և դպրոցի համագործակցության դերը դպրոցականների պատմական գիտակցության ձևավորման հարցում, Երևան 2009թ.

Նածխաշավիղ գիտամեթոդական հանդես, Երևան 2014 Ա.Ա Բաբլյան դպրոցականների գեղագիտական դաստիարակություն

Համագործակցային ուսուցում՝ ձեռնարկ Անտարես 2006թ

Հ. Ցռ. Լիյմետս – Ինչպես է դաստիարակում ուսուցման պրոցեսը:

Երիտասարդ գիտնականի ամբիոն Լևոն Աղիկյան

ԻԿՕՄ-ի (ՅՈՒՆԵՍԿՕ-ին առընթեր թանգարանների միջազգային խորհուրդ 22.էջ 31)

Հղումներ

https://antipolygamy26.rssing.com/chan-13806241/all_p26.html